



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ՀՅՔԴ1/0081/02/08

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

*նախազահույթյամբ՝ դատավոր
 քարտուղարությամբ՝*

L. Հովհաննիսյանի
 Հ. Դարբինյանի

2017 թվականի հուլիսի 26-ին (ք. Մարալիկ)

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Ֆելիքս Սարգսյանի իրավահաջորդ Լատուրա Սարգսյանի(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1ա շ. բն. 6), Գոռ Պողոսյանի(անձնագիր՝ AB0391693 տրված 24.05.1997 թվականին, 017-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թրիլիսյան խճ. 592, բն. 4), Վաղինակ Պողոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանի(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, 116/101 տնակ), Հովսեփ Ազատի Գալոյանի(անձնագիր՝ AE0306627 տրված 27.05.1999 թվականին, 017-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թրիլիսյան խճ. 592, բն. 1), Անդրանիկ Գալոյանի (անձնագիր՝ AE0514619 տրված 29.03.2000 թվականին, 016-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թրիլիսյան խճ. 592, բն. 2, այսուհետ նաև Հայցվորներ) ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ.Նոյեմի 16), <<Պրոգրես>> համալսարանի(ՀՎՀՀ՝ 05501843, պետական գրանցման վակայակն թիվ 015192, հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1, այսուհետ նաև Պատասխանող կամ Հակընդդեմ Հայցվոր), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Գյումրու տարածքային ստորաբաժանման, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ներկայումս՝ ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն), ՀՀ քաղաքաշինության նախարարության (ներկայումս՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե)՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ <<Պրոգրես համալսարան>> ԱԿ-ի (այսուհետ նաև Հակընդդեմ հայցվոր) ընդդեմ Ֆելիքս, Լատուրա, Աստղիկ, Գուրգեն Սարգսյանների, Գոռ, Հասմիկ, Արևհատ, Աստղիկ Պողոսյանների, Վաղինակ, Արևհատ, Վարդուշ, Գինուշ Պողոսյանների, Հովսեփ, Թամարա, Լալա, Լեյլի Գալոյանների, Անդրանիկ, Ելենա, Արթուր Գալոյանների (այսուհետ նաև

Հակընդդեմ պատասխանողներ), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ զբաղեցրած տարածքից վտարելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց



1. Գործի դատավարական նախապատմությունը

21.10.2008 թվականին դիմելով ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարան՝ Հայցվորները պահանջել են մասնակի անվավեր ճանաչել Շիրակի մարզպետարանի և «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի միջև 23.04.2002 թվականին կնքված պայմանագիրը՝ ՀՀ կառավարության որոշմամբ կապի նախարարությանը թողնված ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 59 հասցեի 350քմ մակերեսով բնակելի շինության մասով, շենքի ամբողջ նկուղային մասը թողնելով Կապի նախարարության հաշվեկշռում որպես հետագայում լուծելի խնդիր: Կիրառելով անվավերության հետևանք, մասնակի անվավեր ճանաչել «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի Գյումրու Տիգրան Մեծ թիվ 1 հասցեով շենքի սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ կառավարության որոշմամբ Կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շինության մասով, այդ մասի նկատմամբ դադարեցնելով արտադրական կոոպերատիվի սեփականության իրավունքը՝ շենքի նկուղային հարմն ամբողջությամբ թողնելով Կապի նախարարության հաշվեկշռում:

ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 27.10.2008 թվականի որոշմամբ վերը նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ 14.11.2008 թվականի որոշմամբ նշանակվել է նախնական դատական նիստ:

«Պրոգրես համալսարան» ԱԿ-ն ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում ընդդեմ Ֆելիքս, Լատուրա, Աստղիկ, Գուրգեն Սարգսյանների, Գոռ, Հասմիկ, Արևհատ, ԱՄտղիկ Պողոսյանների, Վաղինակ, Արևհատ, Վարդուշ, Գինուշ Պողոսյանների, Հովսեփ, Թամարա, Լալա Լեյլի Գալոյանների, Անդրանիկ, Ելենա, Արթուր Գալոյանների, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի, որով պահանջել է Հակընդդեմ պատասխանողներին պարտավորեցնել ազատել «Պրոգրես համալսարանին» պատկանող տարածքները:

ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 25.11.2008 թվականի որոշմամբ վերը նշված հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ Հյուսիսային քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 13.01.2009 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքաշինության և տրանսպորտի և կապի նախարարությունները ներգրավվել են որպես երրորդ անձինք:

Դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) 27.02.2009 թվականի որոշմամբ համաձայն ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-46-Ն ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-44-Ն ՀՀ օրենքի համաձայն սույն քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնվել է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Դատարանի (դատավոր՝ Մ.Մարտիրոսյան) 20.03.2009 թվականի որոշմամբ վերը սույն քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ: